



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիս 2020 թվականի
Թիվ 195-Ա

ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մայիսի 26-ի դռնբաց նիստում քննարկեց մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և/կամ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը՝ Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 16-ից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ՝ Հաշվետու ժամանակաշրջան) մեկանգամյա օգտագործման պաշտպանիչ դիմակների (այսուհետ՝ Դիմակներ) գնային տատանումներով և դրանց նկատմամբ սպառողների պահանջարկով պայմանավորված, իրականացրել է ուսումնասիրություն Դիմակների շրջանառության ոլորտներում:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը տեղեկատվություն էր պահանջել Դիմակների շրջանառության ոլորտում ձեռքբերման, այդ թվում նաև՝ ներմուծման, ինչպես նաև մանրածախ և մեծածախ իրացման գործընթացներ իրականացնող մի շարք տնտեսվարող սուբյեկտներից, այդ թվում՝ ներմուծողներից, տեղական արտադրողներից և առևտրային ցանցերից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ապրանքների մանրածախ և մեծածախ իրացման ոլորտներում մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) հնարավոր խախտումների, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման և (կամ) հնարավոր հակամրցակցային համաձայնության

(չհիմնավորված կամ խտրական գների սահմանման և կիրառման, գների չհիմնավորված փոփոխությունների կամ պահպանման և այլն) հատկանիշներ:

Մասնավորապես մեծածախ իրացնողների և առևտրային ցանցերի կողմից 2020 թվականի մարտ-մայիս ամիսներին Դիմակների իրացման ոլորտում նկատվել են հնարավոր չհիմնավորված բարձր գներով իրացման դրսևորումներ, ինչի արդյունքում տվյալ ժամանակահատվածում վերջնական սպառողը ձեռք է բերել Դիմակները բարձր գներով:

Մասնավորապես՝ մեծածախ վաճառքի գները մեկ Դիմակի համար 2020 թվականի մայիս ամսին միջինում կազմել է 120-175 դրամ, իսկ մանրածախ իրացման գները մայիս ամսին՝ միջինում 160-220 դրամ:

Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհի և գերիշխող դիրքի առկայության չափանիշները:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքի (այսուհետ՝ գերիշխող դիրք) չարաշահումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝

ա) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը.

ա.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասող պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը կամ կիրառումը, որի հետ և հետևանքով ստեղծվում են կամ կարող են ստեղծվել անհավասար մրցակցային պայմաններ.

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների (այդ թվում՝ գների) սահմանումը կամ կիրառումն այլ հավասար պայմաններում,

ե) պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին, ներառյալ՝ առևտրի օբյեկտներին, իրենց համար ոչ շահավետ կամ պայմանագրի առարկային չվերաբերող տնտեսապես և (կամ) տեխնոլոգիապես չհիմնավորված պայմաններ պարտադրելը.

ը) այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին.

ժ) ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը.

ժա) չհիմնավորված բարձր կամ չհիմնավորված ցածր գների սահմանումը և (կամ) կիրառումը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

Այսպիսով՝ ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ «Նատալի Ֆարմ», «Նատալի Ֆարմ դեղատուն», «Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ, «Գեդեոն Ռիխտեր» դեղատուն Հ/Ձ, «Վագա-Ֆարմ», «Առնիկա», «Տոնուս-Լես», «Տոնուս-Լես Ռեմեդի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ու «Ալֆա-Ֆարմ» և «Ալֆա-Ֆարմ իմպորտ» փակ բաժնետիրական ընկերությունների վարքագիծը Դիմակների իրացման և (կամ) ձեռքբերման գործընթացներում կարող է պարունակել գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և/կամ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հատկանիշներ:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 30-րդ հոդվածի 8-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է

1. Հաշվետու ժամանակաշրջանում Դիմակների շրջանառության ոլորտում գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և/կամ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ